

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 6 ռուբլի Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպեկ. Տ է լ է Ֆ օ ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Բ Ա Յ Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՌԱՋԻԿԱՅ 1901 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-րդ ՏԱՐԻ)

ԻՐԱՎԱՆԱԿՈՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՈՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ

Ա մ ն օ Ր բ ա ջ ի տ օ ն Ե Ր Ի Ն յ ա ջ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. «Մ շ ա կ ի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍՍՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ Ե Ր Ի Կ ա յ Ի բ ա ժ ա ն օ Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն ը վճարեն տարեկան 7 ռուբլի. Ե ւ Ե Ր Օ ա յ Ի բ ա ժ ա ն օ Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն 30 ֆրանկ. Պ ա Ր օ կ ա ս տ ա ն Ի բ ա ժ ա ն օ Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՎԱՆԱԿՈՆԸ (Բազմաթիւ եւ Բարձրակարգ փողոցների անկիւն):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է զիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատեցէ՛ք ազգաբնակիչներին հետ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Շուշուց. Նամակ Աստրախանից. Նամակ Նըմբազրութեան. Նամակ Նոմրազրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՍՍՀՄԱՆ ԵՍՏՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌՈՒԳՐՈՒՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեծ պահանջ:

զերբասաններ, խոշոր և մանր պաշտօն վարողներ:

Ինքը ինֆլիւէնցան սուր հիւանդութիւն է, բայց նա շատ խիստ տրամադրուած է մարդու կազմուածքը ենթարկելու ամեն տեսակ ուրիշ հիւանդութիւնների ազդեցութեան: Նա թուլացնելով մարմինը դարձնում է նրան զերբազայց և մաքաւման համար անընդունակ:

Մեր բժիշկների վրա պարտաւորութիւն կայ այսպիսի դէպքերում, երբ ինֆլիւէնցան արտակարգ ուժով տարածվել է ազգաբնակչութեան բոլոր խւերում, ասպարէզ գալ իրանց խօսքով և գրով, իրանց խրատներով և նամակազուշայցող խորհրդաձուլութիւններով:

Ոչ որ լուրջ ուղարկութիւն չէ դարձնում հիւանդութեան վրա, համարելով նրան թոյլ և հեշտ բուժելի, մինչդեռ ոչ մի ժամանակ այնքան հեշտ և արագ չէ

բարդանում և լրջանում մարդու տկարութիւնը, ինչպէս ինֆլիւէնցայի ժամանակ: Յանկալի է, որ մեր բժիշկները թէ դաստիարակութիւնների, թէ լրագրական յղուածները և թէ բարձրակարգ միջոցով խօսելին ազգաբնակչութեան հետ, և պարզելով նրա համար հիւանդութեան զարգացման պայմանները և մասնացոյց անելով այն հնարները, որոնցով կարելի է անվնաս դարձնել և թուլացնել հիւանդութիւնը, առաջն առնելին այն բարդութիւնների, որոնք թիթեւ տկարութիւնը փոխարկում են լուրջ հիւանդութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Յ. Бернштейн. „Исторический материализм“. пер. Л. Канцель. Изд. Т-ва „Знание“, 332 стр. ц. 80 к. С.-Петербургъ 1901

Յրանսիացի գրք գրելիս այնպէս է ենթարկուած, թէ ընթերցողը իր ընտրած նիւթի մասին ոչինչ չէ կարգացել, եւ դրա համար գրում է լրիւ և պարզ: Գերմանացի գրողը, ընդհակառակը, այնպէս է կազմում գրքը, կարծես թէ ընթերցողները կարդացած պէտք է լինեն այն բոլորը, ինչ որ հեղինակը ինքն է կարդացել: Այդ պատճառով էլ գերմանական գրքերը այնքան հեշտ չէ կարդալ, որքան ֆրանսիականները:

Բէրնշտէյնի գրքը, որի վերնագիրը տպւած է այս յօդուածի սկզբում, խորին ոճով չէ գրված, բայց նոյնպէս ունի այդ պակասութիւնը, եւ շատ ափսոս, որովհետեւ շատ հետաքրքիր գրք է եւ արժէ, որ նա տարածվէր ընթերցողների մեծ շրջանում:

Բէրնշտէյն իր գրքում քննադատութեան է ենթարկում այն սկզբունքները, որոնք անսխալակաւ են համարվում «ուղղադաւան» մարքսիստների կողմից:

Յայտնի է, որ Մարքս, հրատարակելով իր չափազանց եռանդուն հետեւողների միակողմանիութիւններից, ասում էր, որ «ինքը մարքսիստ չէ»:

Բէրնշտէյնի գրքը մասամբ բանակաւ է այդ իրանց «ուղղադաւան», իսկ ուրիշ կերպ մտածող մարքսիստներին՝ հերձուածող համարող մարքսիստների հետ: Այդ բանակաւ հա-

մար Բէրնշտէյնին անշուշտ շորհակալութիւն կասեն բոլոր ինքնուրոյն մտածող մարդիկ, բոլոր այն մարդիկ, որոնք, Բեռնշտէյնի նման, երբ մի անսխալական պապ պնդում է, թէ երկու անգամ երկու՝ չորս է, սկսում են ստուգել այդ ճշմարտութիւնը:

Պ. Բէրնշտէյն ստուգում է, վիճակագրական փաստերը եւ բէլ իրողութիւնները ձեռքին, այն բոլորը, ինչ որ համարվում է հիմնաքար մարքսիզմի կամ, ուրիշ անուններով, պատմական սօցիալիզմի, անտեսական սօցիալիզմի, գիտական սօցիալիզմի համար:

Ընդունելով հանդերձ Մարքսի մեծ մտաւոր ընդունակութիւնները եւ մեծ ծառայութիւնները գիտութեան առջը, Բէրնշտէյն գտնում է սակայն, որ շատ բանում սխալվում էր Մարքս, շատ բանում էլ հակասում ինքն իրան:

Պ. Բէրնշտէյն ղէմ է ամենից առաջ դիմել փիլակական լոգիկային եւ մատերիալիստական աշխարհայեցողութեան: Այնուհետեւ նա ապացուցանում է, թէ սխալ է մարքսիստների այն դաւանանքը, թէ կապիտալիստական կազմակերպութիւնը ինքը պատրաստում է իր կործանումը: Բայց ինչ որ յօդուածում ասուած է, որովհետեւ սխալ են այդ դաւանանքի հիմքը կազմող այն սկզբունքները, իր թէ հետզհետեւ անհրաժեշտօրէն պակասում է կապիտալիստների թիւը եւ, ընդհակառակը, աւելանում պրօլետարների քանակութիւնը: Կապիտալիստական կազմակերպութիւնը, Բէրնշտէյնի ասելով, ճիշտ է՝ ունի այդպիսի ձգտում, այդպիսի տէնդէնցիա, բայց կան շատ գործօններ, որոնք, հակառակ տէնդէնցիայով գործելով, խանգարում են այդ բանին: Իսկ կիթէ այդ այդպէս է, պէտք է թողնել այն հաւատը, թէ փոխանցումը ներկայ հասարակական կազմակերպութիւնից դէպի պայտայ կազմակերպութիւնը անհրաժեշտօրէն կատարվելու է իրեն մի կատաստրօֆա, իր հետեւանք բռնի յեղափոխութեան:

Բէրնշտէյնի կարծիքով, այդպիսի յեղափոխութիւն ոչ անհրաժեշտ է, ոչ էլ ցանկալի, այլ ցանկալի է եւ անհրաժեշտ խաղաղ բարեփոխումն եւ խաղաղ իրաւացումն այժմեան հասարակական կարգից դէպի ապագայ կարգից:—մի բան, որ արդէն սկսվել է եւ կատարվում է բոլոր քաղաքակիրթ երկրներում:

Ինչպէս տեսնում էք, Բէրնշտէյնը տեսականապէս քարոզում է այն, ինչ որ ընդունում է գերմանական սօցիալ-դեմոկրատների առաջին

նախնները ոչ միայն կատարեալ տղէտներ են, այլ եւ ծուլութեան կատարեալ տիպարներ, մասնաւոր երբ իրենց գրպանը կօպէկ մը լինայու չէ ո եւ կերպով:—Արձանագրութիւններ հաւաքելու եւ արդէն հրատարակուածները բաղադատելու նպատակով գիւղերը շրջապայած միջոցին հանդիպեցայ վանահայր վարդապետի մը, որ իմ ձեռքումը գտնված առաջնորդ Ալլարաւառ-ից սկսեալ օրինակելի գիտեց ինչ—իր քնակած վանքի արտաքին դրան վրայի արձանագրութեան պատճէնը, որ արդէն սխալ է հրատարակված... Իրեն հարցուցի թէ ինչու կօրինակէ, պատասխանեց, որ կը փախալի ունենալ:

—Մճ քու քթիդ տակն է բուն արձանագրութիւնը, վարդապետ, այ ինչու կօրինակես, ըսի գարմայամ:

—Օրհնած, էք չի կարդացվում, դիժար է, պատասխանեց ամենայն պաշարիւնութեամբ:

—Օրերով, շաբաթներով հեռու, իր կեանքին մէջ դեռ մեր վանքերու երեսը չը տեսածներուն մը այս բոլորը հաւաքելու ու հրատարակելու է, ամօթ չէ, որ դուն չը փորձես կարգալ եւ նոյնութեամբ արտադրել:

—Էհ, ինչ անես, օրհնած. ոմանք գալիս են եւ ինձանից արձանագրութիւն են խնդրում, ես էլ էս գրածս կը տամ էլի...

Անա այսպիսիներ են մեր վանքերը բնակող ողորմելի արարածները:

Ս. Ե Ղ մ Ի ա ծ Ի ն.

Կ. Յ. Բաամաջան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԵՆ ՊԱԿԱՍ ՄԸ

«Մշակի» № 223 համարը շատ կարեւոր առաջնորդող մը ունէր, որ կը գանգատէր մեր ունեւոր դասակարգի անտարբերութեան դէպի գիտնական հետազոտութիւնները նուիրված անձնագրութիւնները: Մեր մէջ դեռ շատ հեռու է, որ հարուստները հետաքրքրվեն հրախօսական չոր ու ցամաք անտարբերութիւններով, եւ, եթէ մեր ազգին մէջ կան մի կամ երկու անձնուէր մասնագէտներ, անոնք ալ իրենց անձնական ծախքերով եւ խիստ չարքաշ կեանքով ձեռք անցուցած են իրենց գիտնական պաշարը, առանց մի կօպէկի նպատակ ստանալու մեր անտարբեր կրեոսներից:

Այն լուրը, թէ գիտնական արշաւախուժը մը պիտի գալ յառաջիկայ տարի կողմասում հնախօսական հետազոտութիւններ կատարելու, հետեւեալ խորհրդածութիւններու տեղի կուտայ. 1) Արդեօք չէ կարելի մեր մէջէն արդէն այդ գործին համար պատրաստված մասնագէտ մը վարձել եւ ընկեր տալ յիշեալ արշաւախուժին, որպէս զի հայ մասնագէտն իր ազգային պատմութեան պաշարին ու տեղական բարբառներու ծանօթութեամբ գործակից եւ առաջնորդ լինի. 2) Եթէ այս կարելի չէ, պէտք է որ մեր հարուստները մասնաւոր գումար մը յատկացնեն այդ գործին նուիրված

անձին, որ անձամբ ստանձնէ ամեն աշխատութիւն, խուզարկէ մեր բոլոր վանքերը, հաւաքէ ձեռագրներու, առարկաներու եւ ի մասնաւորի վանքերու եւ հին բերդերու պատերուն վրա գտնված յիշատակարանները, պատրաստէ անոնցմէ շատերուն նմանահանութիւններն ու լուսանկարները, որպէս զի վերջապէս ունենանք հայկական յիշատակարաններու կամ արձանագրութիւններու այնպիսի գիտնական ժողովածու մը՝ որ լինի նման եւրոպական Corpus-ներու (Յայտնի է թէ Եւրոպայում կը գտնուին յունական, լատինական, սեմական եւ այլ արձանագրութեանց տպագիր ստուար ժողովածուներ, որոնք ընդհանրապէս կը կոչվին Corpus.—եւ ես կը պատրաստեմ հայկական բեւեռածեւ արձանագրութեանց համար Corpus մը):

Այն գրութիւնը, զոր ժամանակաւ ի գործ կը դնէին արձանագրութիւններ հաւաքելու համար, բոլորովին մի կողմ թողու է այլ եւս Պատմական եւ մատենագրական շատ մեծ սխալներ գործված են արձանագրութիւններու անհիմնի, պակասաւոր եւ նոյն իսկ կամայական ու ենթադրական հրատարակութիւններէն: Մենք ունեցած ենք Շահաթուրեանների, Արէլ Մխիթարեանցների, Ջալալեանների եւ ասոնց նման տեղագիրներ, որոնք էլ միանում նստած—կամ ուրիշ օ եւ է հաճոյական վայրում—հրամայած են իրենց թիւի քահանաներուն, որպէս զի նրանք իրենց պաշտօնավարած եկեղեցիներում գտնված արձանագրութիւններն օրինակեն եւ բերեն յանձնելու: Այլ ինչ ըսես չեն կատարած այն բարեխիղճ

քահանաները. իրենց երեւակայութեան մէջ տեսնած են թուականներ, բառեր, պարբերութիւններ եւ ամեն տեսակ ընթերցուածներ այդ արձանագրութիւններն ընդօրինակելու ժամանակ. եւ այսպէսով ունեցած ենք կատարեալ հրէշներ քան թէ արձանագրութիւններու գտնածային ժողովածուներ, յիշեալ տեղագրութիւններու մէջ ամփոփված ու շատ անգամներ ալ կրկնված:

Ներկայ ուսումնական ուղեւորութեանս միջոցին անձամբ այցելելով մեր վանքերէ դեռ մի մասը միայն, նկատեցի թէ շատ մը սխալներն սորգած են հ. Ալիշանի Ալլարաւառին մէջ,—արդիւնք իր առջեւ գտնված անձիւղ ու միանգամայն անխիղճ հրատարակութեանց: Օրինակի համար՝ Սաղմոսավանուց բազմաթիւ արձանագրութիւններէն (որոնց մի մասն հաղեւ հրատարակված է ցարդ) մին կսկսի այսպէս, (+ Ի թվ. 27.), որ է ըսել 1255 թ., մինչդեռ հ. Ալիշան ունի «Ի. Թվ. ՈՁԴ.», այսինքն 1235 թ., եւ ասոնց նման շատեր:

Ի հարկէ մենք չէինք պահանջել, որ վեւեալիկ ծիծաղածաւ ծովի կղզիներէ միոյն վրա ապրող բանաստեղծ վանական մը գրութիւններն ընէր եւ մեղադար գիտնական արժէք ունեցող լիակատար հրատարակութիւն մը, զոր միայն կարելի էր պատրաստել անձամբ չըլլելով եւ կանխաւ պատրաստված ըլլալով այդ գործին: Իսկ եթէ այս բանը մենք պատենք մեր խեղճ ու տղէտ վանականներէ, շատ կը խարուինք. արդիւնքը կը լինի այն ինչ որ ունինք արդէն Շահաթուրեանների եւ նմանեաց հրատարակութիւններով: Մեր վա-





